



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԻՍԼ



բիստոսի հրաշափառ և սուրբ հարության ավետիսը «ի կոյս ի վիմէն» դարձալ քրիստոնեական աշխարհի հոգին լցնում է աստվածային լուսավորությամբ, քրիստոնեական հավատի ուրախությամբ և բերկալից խնդությամբ:

«ԱՅՍՈՐ է ջՈՐ ԱՐԱՐ ՏէՐ, ԵԿԱՅՔ ՑԸՆ-ՍԱՍՑՈՒՔ ԵՒ ՈՒՐԱԽ ԼԻՑՈՒՔ Ի ՍՄԱ» (Սահմ. ՃԺ. 24):

Հարության հրաշափառ առավոտուն, մի անգամ ևս Քրիստոսի քափուր գերեզմանից հետում է մեծ և կենարա ավետիսը.

«Զի՞ ԽԵՆԴՐԵՔ ԶԿԵՆԴԱՆԵԽ ԸՆԴ ՄԵՌ-ԵԱԼՍ, ԶԵ ԱՅՅ, ԱՅԼ ՅԱՐԵԱԱ» (Ղոկ: ԽԴ 6):

Արդարե, ինչպես վկայում է նաև հեքանաց մեծ առաքյալը Պողոս՝ «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐՈՒՑԵԱԱ, Է Ի ՄԵՌԵԼՈՅ» (Հոռմ. Զ 9):

Վեհափառ Հայրապետը 1961 թվականի ապրիլի 2-ին Մայր Տաճարում, Փրկչի հրաշափառ և Ս. Հարության տոնի առքիվ խոսած իր հարոգի մեջ, անդրադառնալով Ս. Հարության տոնի բերած մեծ ուրախութան մասին, ասում էր.

«ՀԱՎԱՏԱՎՈՐ ԵՎ ՀՈՒՍԱՑՅԱԼ ՈՐԴԻՇՔ ՄԵՐ, ԴՈՒՔ ԲՈԼՈՐԴ, ՄԻԱՍԻՐՏ, ՑՆՆԱՑԵՇՔ ԵՎ ՈՒՐԱԽ ԵՂԵՇՔ ԵՎ ՕՐՀՆԵՑԵՇՔ ՄԱՐԴԱ-ՍԵՐՆ ԱՍՏՎԱԾ, ԶԻ ԱՅՍ ԴԱՏԱՐԿ Է ԳԵՐԵԶ-ՄԱՆՆ ՄԱՀՎԱՆ ԵՎ ՓՇՐՎԱԾ ԵՆ ՇՂԹԱՆԵՐԸ ԴԺՈՒՔԻՆ, ՄԵՂՔԻՆ, ԶԱՐԻՆ»:

Հարության տոնը, որը ժողովրդական արտահայտությամբ կոչվում է նաև Զատիկ, քրիստոնեական աշխարհի մեծագույն և ամենածովորդական տոնն է, տոնը՝ հալա-

տավոր մարդկության հոգեւոր պիրկուրյան, ազատության, բարոյական վերածննդյան:

Իսկ Զատկավ կարմիր ծուն և զառը՝ զարբենդ և հարություն առնող բնության տոնն են խորհրդանշում: Ուրեմն Հարության տոնը՝ տոնն է միաժամանակ բնության վերազարբենդի և ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵՎՈՐ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԵՐԱՄԾՆՈՒԹՅԱՆ: Անցնամ է ամեն տարի խստաշունչ ձմեռ և զալիք օրերին փշում է զարենանային կենարա շոնչը, հարություն տալով մեռած բնության, բյուր ծաղիկներով և բումումենով, և մարդկությունը, ցընծագին, ողջունում է զարնան գալուստը Զատկի տոնով:

«ԱՅՍՈՐ, — ասում է Վեհափառ Հայրապետը, — ԵՐԲ ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՅԱԾ ԿԱՎԵՏԵ ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐՈՒԽ, ԻՆՔԸ ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԼ ԿԱԹԱՓԻ ԻՐ ՔՈՒԽԵԽ: ԱՆՀԱՅՅ ԱԿՈՒՆՔԵՐԵ ԿՇԱՐԺԻ ԵՎ ԳԵՎԻ ԱՐԵՎ, ԿԱՐՉՐԱՍԱ, ԱՎՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻՆ: ՏԻԵԶԵՐՔԻ ՀԱՎԱՏԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒԽՆԵՐԵՆ ՆՈՐ ՇՈՒՆՉ ՄԵՐ ԿՓՋԵ, ՄԵՐ ԱՇԽԱՐՀԻՆ ԳՄՐՈՒԽ ԲԵՐՈՂ:»

ՏԵՌ ԱՍՏՎԱԾ, ԱՅՍ ԻՆՉ ՀՐԱՇՔ Է, ԱՅՍ ԻՆՉ ԱՆՍՊԱՌ ԿԵՆԱՐԱՐ ՈՒԺ Է ՄՇՏԱՆՈՒՐՈԳ, ՈՐ ԿՈԳԵՇՆՉ ԱՇԽԱՐՀԸ, ԱՄԲՈՂՋ ԵՎ ՀՅՈՒԽԵՆ ՄԵՐ ՀՈԳԻԽԻՆ:

ԳԱՐՈՒԽ Է ԱՇԽԱՐՀԻՆ ԵՎ ԶԱՏԻԿ ՄԵՐ ՀՈԳԻԽԵՐՈՒԽԻՆ»:

Քրիստոնյա աշխարհի համար, սակայն, Զատիկը գերազանցապես ՀԱՎԱԾԻ ՏՈՆՆ Է, բնության վերազարբենդի հետ, տոնը նաև մարդու հոգեւոր, բարոյական վերակենդանության:

Արդարե, Քրիստոսի հարության ավետիկը խոստումնալից սկիզբը հանդիսացալ

մի նոր կյանքի, մարդկության ծոցում և պատմության մեջ՝ մի նոր շարժման և միաժամանակ մղբ ուժը բաղաբակրության:

Հզգեպես և բարոյապես սնանկացած ու գերեզմանի եղրին հասած եին աշխարհի համար Քրիստոսի հարության ավետիքը հնչեց և իր լույսով ու զորությամբ վերաբռնության շունչը բերեց ծերացած այդ եին աշխարհին:

Հարության այդ ավետիքը կերպարանափոխից վշտի և հուահատության մեջ ընկած առաջաներին: Անա հարուցյալ Քրիստոսի եղրից երանց աշերի առաջ է կանգնած, և ավելի հզոր, ավելի հենդանի, և լուս էն նրա վսեմ խոսերը: Նրանց մեջ, Քրիստոսի հարության շնորհիվ, հարություն է առնամ նաև առաջելական հշմարիտ նոգին: Երեկով առասահատ և լիված աշակերտները, հարության ավետիքով զոտեպեղված, դառնում են արիասիրա, համարձակ, արհամարնում են մահր և համոզումով բարողամ հարության մեծ դեպքը:

Քրիստոսի հարության ավետիքով վերակենացած և պայծառացած, առաջյալ-ները վերակենացրին իրենց ժամանակից աշխարհը, բարոյապես մեռած աշխարհին կյանք առին և հարության լույսով լուսավորեցին սերունդների ճանապարհը: Քրիստոնյա աշխարհը հարության ավետիքով անցավ խան դաւերի երկար ճանապարհը: Այսոր աշխարհը ավելի խան երթեւէ, կարիքն ունի բարոյական, հոգեուր, գաղափարական վերազարբանի հարության լույսով և հարության գաղափարով:

ՀԱՆԿԱՑՈՒՆ ԵՎ, ՈՐՈՇՈՂ, ԲԱ.33 ՄԻՇՏ ՀՈՒՍԱՑՈՂ ՄԱՐԴԻ, — ասում է Վեհափառ Հայրապետը իր այս տարվա Զատկավա բարողամ, — ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՅՑՈՎ ԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՐԱԶԸ: ԿԵՐԱԶԸ, ԿՏՔՆԻ ՈՒ ԿՔԱԼԵ ՀԱ.0.Ս.Զ, ՄԵՐԹ ԿԳԼՈՐՎԻ ԱՆ, ԲԱ.33 ՆՈՐԵՆ ԿՐԱՐՁՐԱՆԱ: ՄԵՐԹ ԿՔԱՆԴԵ, ԲԱ.33 ՎԵՐՍԻՆ ԿԿԱ.ՈՈՒՑԱՆԵ: ԵՎ ՀԱՎԵՏ ԿՏԵՆՉԱ.ԻՐ ՄԵԶ ՆՈՐ ՄԱՐԴԸ ԿԵՐՏԵԼ: ԱՎԵԼԻ ԿԱՏԱՐ-ՅԱԼ, ԱՎԵԼԻ ԲԱՐԻ, ԱՎԵԼԻ ԱԶԱ.Ս ՄԵՂՔԻ ԵՎ ԿՈՒՅՅՐ ԿԻՐՔԵՐՈՒ ԿԱՊԱՆՔՆԵՐԵՆ, ԻՐ ՀԱ-33.Ա.ՔԸ ՀԱ.Ո.Ս ԴԵՓՈՒ ԵՐԿԻՆՔ, ԴԵՓՈՒ ՏԵՍԻՆՔ ՃԱՄԲԱՆԵՐԸ ՄԵԾ ՀՈՒՅՑՈՒՆ, ԴԵՓՈՒ ԼՈՒՅՑՈՒ Ա.ՂԲՅՈՒՐԸ ՀԱՎԱՏՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ, Ա.ՅԴԴ ՃԱՆԱ.ՊԱՐՀՀՈՎ ԳՏՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՅԱՆՔԻ Ա.ՅԸ ԻՍԿ ԱՓԻՆ ԻՄԱՍՏՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ ԻՐ ԳՈՅՈՒԹՅԱՆ, ԳՏՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՍԱՐԱԿԵԴՈՒԹՅՈՒՆԸ: ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ:

Քրիստոնեական հավատը և բարոյական խարսխում են հարության պատգամի և ավետիքի վրա: «ԱՐԴԱ.ԲԵՆ ՔՐԻՍՏՈՍ ՅԱ-ՐԵԱԼ Ի ՄԵՌԵԼՈՂ»: Ամեն Քրիստոնյա խղճանակի համար պատմական անսուտ

վկայություն է և հոգեկան մեծ հշմարառություն՝ առաջյալի այս խարողը: Քրիստոսի հարության պատմական հշմարառությունը երմանարեն է միաժամանակ Քրիստոնեական եկեղեցու կյանքի և գյուրթյան:

Որքան միխրարական և սրտապնդող է հարության ավետիքը: Արդարէ, կյանքում աճնուածիկն է մահր, բնուրյան օրինաշփորյունն է ան: Մտնում է մահր ամեն դոնից և դարբասից և վրդովում կյանքի խաղաղությունը, ընտանեկան երջանկությունը: Աշխարհի փոշի հատիկ է մանվան առաջ: Կույր աշերով, մանվան գերանին ձեռքում, ինչպես երան պատկերացրել է ժողովրդական իմաստությունը, մահր մտնում է կյանքի կանաչ դաշտերի մեջ, հնձում անխնա, չի խնայում ծառ ու ծաղկի, մոռ գրկից խլամ է երեխային, որքացնում մանուկներին: Դարեւ շարունակ մահր ծառ մղձավածի հման ննչել է կյանքի, մարդկային մասնության և զգացմունքների վրա:

Միայն Քրիստոս հաղթեց մանվան: «ՄԱ-ՀՈՒԱՄԹ ԶՄԱՀ ԿՈԽԵԽԱՅ» և մարդկությանն ազատեց մանվան սարսափեներից և իշխանությունից: Ո՞՛Ի՛ է ՄԱՀ, ՀԱՂԹՈՒԹԵՐԻՆ ՔՈ, ԵՒ Ո՞՛Ի՛ է ԴԺՈԽՔ, ԽԱ.ՅԹՈՒՑ ՔՈ»: Քրիստոնյայի համար գերեզմանով չի վերջանում մարդու կյանքը: Գերեզմանը ունայնության փոս չէ, այլ մի նոր կյանքի հախաղուու, բացված անմահության, հավերժության հօր կյանքի վրա:

Քրիստոնյայի մահր մահ չէ, այլ խաղաղ ու երկար մի ենիշ, որից եա զարբենու է, ժառանգելու համար անմահությունը: Որքան միխրարիշ է հարության ավետիքը տառապող սրա համար: Քանի՛-քանի՛ մայրեւ նողին են հանձնել իրենց սրա հաղիկներին: Քանի՛-քանի՛ ծեղանաւը զավակներ վշտահար ընկել են իրենց ծեղների գերեզմանների վրա: Որքան սփոփարար է այդ բոլորի համար լսել Ավետարանի պատգամը. «ՄԻ՛ ԼԱ.ՅԹ, ԶԻ՛ ԽԵՆԴՐԻ Ք ԶԿԵՆԴԱՆՆԻՆ ԸՆԴ ՄԵՌԵ-ԵԱԼՍ»: Կյանքում կա՞ սրանից ավելի սրտապնդիշ միխրարություն բռլոր երանց համար, որնենք վաղաժամ հողին են հանձնել իրենց սփերիշներին:

Քրիստոսի հարության ավետիքով եկեղեցին իր զավակներին սովորեցնում է «ԱՅՈ, ՅԵՒՆԱԼՔ ՅԱ.ԲԵՆՆԵՆ. ԱՐԻ ՈՐ ՆՆՁԵԽԴ ԵՒ ԿԱՆԿԱՆԵԱԾ Ի ՄԵՌԵԼՈՂ ԵՒ ԼՈՒՍԱ.ԽՈՐԵՍ-Ց ԶՔԵԶ ՔՐԻՍՏՈՍ»:

Քրիստոսի հարության ավետիքով տոգորված, Պողոս առաջյալ Քրիստոնեության ամբողջական բարողամ բարողամ անապատական հարության պատմական ավետիքի վրա: «ԱՐԴԱ.ԲԵՆ ՔՐԻՍՏՈՍ ԶԻՑ ՅԱ.ՐՈՒ-ՑԵԱԼ, ԸՆԴՈՒՆԱՅՆ է ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՆ ՄԵՐ, ԸՆԴՈՒՆԱՅՆ ԵՆ ԵՒ ՀԱ.ԽԱ.ՍՔԻ ԶԵՐ»: Քրի-

տոսի հարության ավետիքը հավատավոր մարդկության հոգեոր փրկության երաշխիքն է հանդիսանում:

Քրիստոսի հարության ավետիքի ամենաշերմ հավատացողներից մեկն է եղել հով մեր ժողովուրդը իր կյանքի փորձով: Քրիստոնեա հայ մարդը, Քրիստոսի հրաշափառ հարության դեպքի մեջ միշտ տեսել և տոնել է իր հոգեոր, ազգային, մշակութային վերապարբենի տոնը: Հայ հավատացյալ ժողովուրդը պարել, աշխատել և ստեղծագործել է հարության հավատով և ավետիքով:

Քառե երկար դարեր շեն մարել հայ հավատացյալ ժողովրդի հոգուց հարության լուսն ու հավատը: Այսօր ահա իր գերեզմաններից, իր հայրենի անցյալի ավերակներից հարություն է առել հայ ժողովուրդը և հարության զաղափարով գտեպեղված, բայլում է դեպքի իր լուսապայծառ պապան:

Հարության այս սրբազն առավոտուն, ինչքան ջերմ, ինչքան իրավ և անկեղծ է հնչում, Մայր Արոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի սրբազն բեմից՝ Ամենայն Հայոց Հայրապետի զատկական սուրբ պատգամը.

«ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԶԱՎԱԿՆԵՐ ՄԵՐ, ԱՅՍՈՐ, ԵՐԲ ՑՆՈՒԹՅԱՄԱՍՐ ԿՏՈՆԵՆՔ ՄԵՐ ՏԻՐՈՉ «ՍԻՐՈ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆ»-Ի ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՆ ՀԻՇԱՏԱԿԸ, ԱՆԽՈՐՏԱԿ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՄՐ, ԱՆԴԱՄ ՄԸ ԵՎՍ ՈՒԽՏԵՑԵՔ ՄՆԱԼ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԼՈՒՅԻ ԼՈՒՅՍ ՀԱՎԱՏՔԻՆ, ԵՎ ԱՅԴ ՀԱՎԱՏՔԻ ՎԵՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՇՄԻԱԾՆԻՆ, ՈՒԽՏԵՑԵՔ ՄՆԱԼ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱԶԳԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԲԱԺԱՆԵԼԻՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԻՆ, ՈՒԽՏԵՑԵՔ ՄՆԱԼ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄԵՐ ԽԱՂԱՂԱՏԵՆԶ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՇԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՇԱՀԵՐՈՒՆ, ԵՎ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱԱՎԱԾԱՌԱՔ ՊԱՏԳԱՄԻՆ:

ԶԱՏԻԿ է ԱՅՍՈՐ, ՄԵՆ ԿԻՐԱԿԻՆ է ԱՅՍՈՐ: ԱՅՍՈՐ «ՅԱՐԵԱԼ Ի ՄԵՌԵԼՈՑ ՓԵՍՍՅՆ ԱՆՄԱՀ ԵՒ ԵՐԿՆԱՌՈՐ»:

«ՓԱՌՈՔ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹՅԱՆ ՔՈ, ՏԵՐ»:

Եվ փառք հրաշափառ հարության լո, ժողովուրդի իմ, ժողովուրդի հայոց:

